ոչ միայն խաղողի որթը հարաւային պատին, որ կարող է իւր լսկական տեղում չլինել, այլ չէնքի այլ մասից այդտեղ ամրացրած (Պատկ· 22), այլ յատկապէս նորա կից սահմոյակների հպուռպիւտ բուսական եւ կենդանական քանդակները, արմաւենու երկու կողմից մի մի եղնիկ եւ նրանց յետեւից մի մի առիւծ· արմաւենիի երկու կողմից (Պատկ· 23) եղջերուները համեմատելի են Բասախի արեւմտեան դրան քանդակի (Պատկեր 7) հետ, գարնէկի ալիքաձեւ արմաւենիկի գարգը Բասախի, Տիկորի, եւ բազիլիկաների մատնանշած խոյակներին (օր· Պատկ· 63)։ Միւս արեւմտեան կիսախոյակը (Պատկ· 24) կեդրոնում հաւասարակող խաչի տակ մի փոքր ծառ· հորիզոնական թեւերի վերայ մի մի թռչուն, ադաւնի, տակը մի փոքր եւ կողքերից համեմատաբար աւելի մեծ ծառ, որ ձիթենու նմանութիւն է բերում։ Վերեւի գարնէկի քանդակը՝ ալիքաձեւ արմաւենիկը հելլենիստական մոտիւ է, որ հանդիպում ենք նոյն հասանքին պատկանող չէնքերի վերայ։ Կենդանական մի խոյակ էլ ունէինք Բասախում փոքր եկեղեցու մաս, մեծից տարբեր, գիւղի արեւմտեան կողմը, որ փոխադրել ենք էջմիածնի թանգարանը, մի եւս մի մասին մարդկային մի ֆիգուր չան գլխով։

Բերդի եկեղեցին համեմատաբար աւելի հին համարելով Օձունի երեք չէնքերի մէջ,



Պատկ· 23

պատկերագրութեան կողմից սորա եւ յուշարձանի մէջ արուեստի որոշ նմանութիւն է նկատւում, իսկ յուշարձականի (Պատկ· 25–25ա) եւ տաճարի (Պատկ· 26–27) ծագման նկատմամբ կասկած լինել չէ կարող երեքից նրեթի եւ կառուցուածքի նկատմամբ։ Իրենց կամարակ քարերով եւ արուեստով նրանք պատկանում են Տիկորի եւ Երերոյքի չրջանին, որոնք Ե–Զ· դարերի գործեր են,